



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Թեմա 5-րդ դասարանում տեխնոլոգիա առարկայի «Նյութերի գեղարվեստական մշակում» բաժնի «Փափուկ խաղալիքներ» թեմայի դասավանդման մեթոդիկան

Կատարող Կարապետյան Սոննա
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար տեխ.գիտ.թեկն., դոցենտ Նունե Օրդյան
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

| | |
|--------------------------------------------------------------------------|-----------|
| §1. «Փափուկ խաղալիքներ» թեմայի դասավանդման առկա մոտեցումները..... | 4 |
| §2. Փափուկ խաղալիքների պատրաստման տեխնոլոգիան .. | 7 |
| §3. «Փափուկ խաղալիքներ» թեմայի դասավանդումը 5-րդ դասարանում..... | 8 |
| ԴԱՍԻ ՊԼԱՆ..... | 11 |
| Եզրակացություն..... | 17 |
| Օգտագործված գրականության ցանկ..... | 18 |

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ միջին դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ծրագրում նախատեսված են նյութերի գեղարվեստական մշակմանը վերաբերող թեմաներ, որոնց դասավանդման մեթոդների կատարելագործման խնդիրը պահանջում է համակողմանի ուսումնասիրություններ և վերլուծություններ: Փափուկ խաղալիքների պատրաստման տեխնոլոգիաների ուսուցման արդյունքում զարգանում են սովորողների ճանաչողական, կիրառական և ստեղծագործական կարողությունները, աշխատանքային հմտությունները, գեղագիտական ճաշակը, ձևավորվում է ազգային ավանդույթների պահպանման և զարգացման նկատմամբ դրական վերաբերմունք,

Հետազոտության նպատակն է՝ մշակել արդյունավետ մեթոդներ «Նյութերի գեղարվեստական մշակում» թեմայի դասավանդման համար:

Նպատակի իրականացման համար նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել մեթոդական գրականության մեջ և համացանցում առկա այն նյութերը, որոնք վերաբերվում են հետազոտության թեմային,
- դասակարգել և վերլուծել առկա մոտեցումները, վերհանել լրացուցիչ մշակման հարցերը,
- մշակել մեթոդական նյութեր, որոնց կիրառության շնորհիվ կբարձրանա «Փափուկ խաղալիքներ» թեմայի ուսուցման արդյունավետությունը:

Հետազոտության օբյեկտը՝ 5-րդ դասարանում տեխնոլոգիա առարկայի «Նյութերի գեղարվեստական մշակում» բաժնի «Փափուկ խաղալիքներ» թեմայի դասավանդման գործընթացն է:

Հետազոտության առարկան թեմայի դասավանդման ժամանակակից մանկավարժական մեթոդների ու տեխնոլոգիաների կիրառության գործընթացն է:

§1. «Փափուկ խաղալիքներ» թեմայի դասավանդման առկա մոտեցումները

Խաղալիքը միշտ ուղեկցել է մարդկանց, այն դեկորատիվ և կիրառական արվեստի ամենահին ձևերից մեկն է, զարդարում է մեր առօրյան, հաճելի է աչքին: Երեխայի ամենաթանկ ու ամենամոտ արվեստի առարկաներից են՝ խաղալիքները: Խաղալիք պատրաստելը արվեստ է: Երեխայի առաջին ծանոթությունը աշխարհին, նրա գիտելիքներն ու հասկացողությունը անցնում են խաղալիքի միջոցով: Սա զգացմունքների մի տեսակ դպրոց է, որն ակտիվացնում է մտքերը, երևակայությունը, ֆանտազիան, խոսքը, հիշողությունը, հույզերը, սերմանում է ձգտում գեղեցկության նկատմամբ, այն ծառայում է մտավոր, բարոյական, գեղագիտական դաստիարակության նպատակներին:

Առաջին խաղալիքներից են փափուկ խաղալիքները՝ տիկնիկները: Հայտնի չէ, թե ով է ստեղծել առաջին տիկնիկը, բայց աշխարհի բոլոր ազգերն ունեցել են իրենց ազգային տոների հետ կապված խորհրդանիշ տիկնիկներ: Դարեր շարունակ տիկնիկները կազմել են տարբեր ազգերի մշակույթի անբաժանելի մասը:

Դրանք հիմնականում պատրաստել են առանց դեմքի՝ կոճղի վրա լաթի կտորներ փաթաթելով: Ավանդության համաձայն՝ դեմք ունեցող տիկնիկի մեջ հեշտությամբ մտնում էր չար ոգին եւ վնասում մարդկանց: Ավելի ուշ ստեղծվել են դեմք ունեցող տիկնիկներ: Տիկնիկները հնագույն ժամանակներից եղել են ազգային տոների բաղկացուցիչ մասը եւ իրենց հագուստով ու արտաքին տեսքով մարմնավորել են տվյալ ազգի աշխարհայացքային առանձնահատկությունները:



Նկ. 1. Հայկական ազգային տիկնիկներ

Խաղալիքը դեկորատիվ-կիրառական արվեստի ամենահին տեսակներից մեկն է: Բոլորը սիրում են խաղալիք՝ ինչպես երեխաները, այնպես էլ մեծերը: Ձեռագործ խաղալիքն ունի մեծ նշանակություն անձի համակողմանի զարգացման, նրա անհատականության արտահայտման մեջ: Երեխայի ձեռքով անցած յուրաքանչյուր խաղալիքը նրա համար հատկապես սիրելի է դառնում, քանի որ նա աշխատել է, ներդրել է իր երևակայությունը: Ջարմանալի չէ, որ սիրած խաղալիքները նրանք են, որոնք պատրաստված են սեփական ձեռքերով:

Երեխաները սովորում են ոչ միայն խաղալիքներ կարել, այլև սովորում են մոդելավորման, օգտագործել գույները համատեղելու ունակությունը: Աշխատանքի ընթացքում դաստիարակվում է համբերատարությունը, կոկիկությունը, զարգանում է երևակայությունը և ստեղծագործական մոտեցումը գործի նկատմամբ: Յուրաքանչյուր տոնի համար երեխան ցանկանում է իր ընտանիքին և ընկերներին նվիրել այնպիսի նվեր, որը ոչ ոք չունի: Եվ այս հարցում նրան կօգնի փափուկ խաղալիքներ պատրաստելու ունակությունը:

Խաղալիքների ստեղծման վրա աշխատելը ստեղծագործական գործունեություն է և համապատասխանում է արվեստի և աշխատանքային կրթության խնդիրներին, զարգացնում է գեղագիտական ճաշակ: Սեփական ձեռքերով խաղալիքներ պատրաստելը՝ զգացմունքների, գեղագիտական ճաշակի, բանականության, ստեղծագործական ուժերի, այսինքն՝ երեխայի ընդհանուր զարգացման ոլորտը զարգացնելու միջոց է:

Մարդու ձեռքով պատրաստված խաղալիքները տաքանում են նրա ձեռքերի ջերմությամբ և սիրով, նրանք շատ ավելի լավ էներգիա կբերեն մարդկանց կյանքին, քան գործարանային խաղալիքները: Այժմ խանութները լի են գեղեցիկ և փափկամազ փափուկ խաղալիքներով՝ արջուկներ, շներ, կատվիկներ, բադեր, բայց դրանք բոլորն էլ միապաղաղ են և նման են միմյանց: Երեխայի համար իր ձեռքով պատրաստված խաղալիքը երջանկություն է բերում: Խաղալիքն ունի նաև գեղագիտական դաստիարակության գործառույթ: Դեկորատիվ - կիրառական արվեստը մարդկանց հոգևոր հարստության զգալի մասն է: Այն ընդգրկում է գեղարվեստական արհեստների լայն տեսականի՝ կապված մարդկային միջավայրի գեղագիտության հետ: Դրանց առանձնահատկությունը տեխնոլոգիական և գեղարվեստական սկզբունքների, ավանդույթների և արդիականության սահմանափակ համադրություն է: Դեկորատիվ-կիրառական արվեստը սերտորեն կապված է մարդկանց պատմության, մշակույթի և առօրյա կյանքի հետ, ուստի այն կարևոր նշանակություն ունի աշակերտների գեղագիտական և աշխատանքային կրթության մեջ:

Խաղալիքների պատրաստմանը նվիրված թեմաների ընդգրկումը «Տեխնոլոգիա» առարկայի ծրագրում լիովին արդարացված է, ավելին՝ ինչպես ցույց են տալիս դիտումները, երեխաների համար ամենահետաքրքիր թեմաներից մեկն է այն, և այդ դասերին նրանք մասնակցում են մեծ խանդավառությամբ ու դրական սպասելիքներով:

Կարևոր է նկատել, որ թեմայի նախապատրաստման համար բավականաչափ արդյունավետ աշխատանքներ են կատարվել ինչպես տարրական դասարաններում, այնպես էլ 5-րդ դասարանի՝ այդ թեմային նախորդող դասերի ընթացքում: Մասնավորապես, աշակերտներն արդեն ունեն նախնական գիտելիքներ և պատկերացումներ թղթից պատրաստվող իրերի, դետալների չափերը որոշելու, դետալները միացնելու, փռվածքի, էսքիզի, մոդելների նախագծման, գործվածքների, դրանց տեսակների, կարատեսակների, հագուստի պատրաստման տեխնոլոգիայի մասին: Այդ ամենը նպաստում է, որ «Փափուկ խաղալիքներ» թեմայի ուսուցումը արդյունավետ ընթանա, մնում է

նպատակային օգտագործել աշակերտների այն հմտությունները, որոնք արդեն ձևավորվել են ուսումնառության նախորդ ժամանակահատվածում:

§2. Փափուկ խաղալիքների պատրաստման տեխնոլոգիան

Փափուկ խաղալիքները, ինչպես ասվեց, գոյություն ունեն շատ հին ժամանակներից: Միայն թե, զուտ խաղալիք լինելուց բացի, դրանք կարող են լինել առավել օգտակար իր: Օրինակ՝ կար ու ձևի համար կարևոր և անհրաժեշտ պարագաներ: Այս իրերի առավելությունը նրանց յուրահատկության, անկրկնելիության մեջ է: Ամենակարևորն այն է, որ այս առարկաները պատրաստվում են սեփական ձեռքերով, դրանց մեջ դրվում են անչափ սեր և հոգի: Գործնականում նման իրերը բավականին գործառնական են, երկար ժամանակ ծառայում են տիրոջը: Նման խաղալիքների շարքին են պատկանում կենդանիների, մրգերի և բանջարեղենների տեսքով ասեղամանները: Դրանք պատրաստվում են թել չթողնող գործվածքներից՝ պարզ պատկերների միջոցով: Այս ինքնաշեն առարկաները հնարավորություն են տալիս անվտանգ պահպանել թելը, ասեղը, գնդասեղը:

Փափուկ խաղալիք-բարձեր կարող են կարվել և ձեռքով, և կարի մեքենայով: Ձևավորման նպատակով օգտագործվում են թել չթողնող գործվածքներ, կոճակներ, գունավոր թելեր և այլ նյութեր: Դրանք գունեղ են, յուրահատուկ և միակն են իրենց տեսակի մեջ: Ավելի փոքր չափերի փափուկ խաղալիքները կարող են օգտագործվել որպես գրչատուփ: Այս դեպքում դրանք չեն լցոնվում: Դրա փոխարեն կարվում է աստառ և ավելացվում շղթա բացել-փակելու համար:

Երեխաներն ստեղծում են իրենց գրչատուփի տարբերակը՝ օգտվելով ներկայացված օրինակներից, կամ պարզապես ստեղծում են նորը՝ իրենց անհատական, անկրկնելի տարբերակը: Անչափ գեղեցիկ և հրապուրիչ են

սեփական ձեռքերով ստեղծած պայուսակները և դրամապանակները: Դրանք կարող են լինել փափուկ խաղալիքի տեսքով կամ պարզապես պարզ պայուսակներ՝ ձևավորված ապլիկացիայի տարրերով:

Անկրկնելի են ինքնաշեն կախազարդերը՝ պատրաստված կաշվի մանր կտորներից: Դրանց մասնիկները կարող են իրար միացվել թակալակարով, որը ինչպես գիտեք փոխարինում է մեքենայակարին:

Փափուկ խաղալիքներ՝ բարձեր, ասեղամաններ, գրչատուփեր, պայուսակներ և կախազարդեր ստեղծելու փուլերը նույնանման են.

1.Ընտրել մոդելը:

2.Ընտրել նյութերը:

3.Գծել գծագիրը:

4.Պատրաստել ձևվածքը:

5.Ձևել, թողնելով կարաբաժիններ:

6.Միացնել դեղալիները գնդասեղներով կամ բլանդակարով:

7.Դեղալիները միացնել հիմնական կարի տեսակով:

8.Ձևավորել ապլիկացիայի տարրերով:

Փափուկ խաղալիքների տարատեսակներից են խոհանոցային որոշ պարագաները՝ խոհանոցային թաթմանները, բռնիչները և այլն: Օրինակ՝ խոհանոցային թաթմանի գծագրի հիման վրա կարող ենք պատրաստել բազմաթիվ այլ հետաքրքիր և յուրօրինակ թաթմաններ: Խոհանոցային ձեռնոցի գծագիրը կառուցելու նպատակով կարելի է օգտվել երկու տարբերակներից՝ գծագրի կառուցումը ըստ վանդակների և ըստ չափերի:

§3. «Փափուկ խաղալիքներ» թեմայի դասավանդումը 5-րդ դասարանում

Թեմայի արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ է նախ հստակ պլանավորել և ապա գործնականում իրականացնել պլանով նախատեսված գործողություններն ու քայլերը:

Դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է նկատի ունենա և՛ ներկա, և՛ հեռահար խնդիրների լուծման քայլերը: Պլանավորումը չի կարող ընթանալ առանց ուսուցչի՝ սովորողների գիտելիքների, հմտությունների և մոտեցումների վերաբերյալ հստակ պատկերացումների:

Պլանում պետք է հստակ արտացոլվեն՝

- դասի հիմնական կրթական խնդիրները
- ուսումնառության փորձարկումները և վարժությունները
- ուսուցչի դերը և աշակերտների դերերը
- ուսումնառության աղբյուրները
- գնահատման ցուցանիշները:

Արդյունավետ դասի անցկացման հիմնական նախադրյալների շարքում պետք է կարևորել դասի կառուցվածքի ճիշտ ապահովումը: Դասի կառուցվածքը պայմանավորված է դասի տեսակի, ուսումնական նյութի բովանդակության, ուսումնական բազայի, դասասենյակի տեխնիկական հագեցվածության և այլ գործոններից: Ներկայացնենք ակտիվ ուսումնառությանը և մտածողության զարգացմանը նպաստող դասի պլանավորման կառուցվածքի նմուշօրինակ[4, 8]:

- **Թեման, դասարանը, տևողությունը:**

- **Նպատակները՝**

Ակադեմիական նպատակներ –գիտելիքներ

Սոցիալական նպատակներ – կարողությունների, հմտությունների ձևավորում, զարգացում

Արժեքային համակարգ- վերաբերմունք, դիրքորոշում:

- **Անհրաժեշտ նյութեր և միջոցներ**

- դիդակտիկ նյութեր, պարագաներ, մուլյաժներ, գործիքներ,
- գրականություն, պաստառներ, փաթեթներ,
- նկարներ , վերատպումներ, համացանց, համակարգիչ, պրոեկտոր:

- **Ներածություն, կողմնորոշում**– սովորողների ուշադրության կենտրոնացում այն նյութի վրա, որը ներկայացվելու է տվյալ դասին:

- **Մեթոդներ, մեթոդական հնարներ**

- **Դասի ընթացքը**/ ուսուցման գործընթացի փուլերը քայլ առ քայլ/:

Այսպիսով, դասը կառուցվում է 3 փուլով.

1.դասի սկիզբ ---խթանում,

2.դասի հիմնական մաս – իմաստի ընկալում – բացատրություն

3.դասի ավարտ --կշռադատում-ամփոփում:

Փուլերից յուրաքանչյուրի համար կատարվում է ժամանակի մոտավոր բաշխում.

Խթանում՝

Այս փուլի նպատակը աշակերտների հետաքրքրությունը խթանել է, խորհել նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ, վեր հանել այդ թեմայի վերաբերյալ իրենց նախնական գիտելիքները, հարցեր տալ և ձևակերպել սովորելու կոնկրետ նպատակները:

Իմաստի ընկալում՝

Այս փուլի ընթացքում աշակերտները տեքստի, ուսուցչի հաղորդման կամ ուսումնական որևէ այլ միջոցներով ծանոթանում են նոր նյութին և այդ ընթացքում նրանցից ակնկալվում է նոր գաղափարները ներհյուսել արդեն գոյություն ունեցող պատկերացումների մեջ:

Կշռադատում՝

Ավարտվում է դասը կշռադատման փուլով, որի ընթացքում աշակերտները իրենց ունեցած պատկերացումների համատեքստում խորհում են սովորածի մասին, որպեսզի վերակառուցվեն գիտելիքները:

Ամփոփում՝

Ի՞նչ եզրակացությունների պետք է հանգել դասի արդյունքում:

Ո՞րքանով են արդեն լուծված խնդիրները:

Այժմ այս մոտեցումները կոնկրետացնենք 5-րդ դասարանի “Փափուկ խաղալիքներ” թեմայի համար:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

| | |
|----------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Առարկա | Տեխնոլոգիա |
| Դասարան և կիսամյակ | 5-րդ դասարան, 2- կիսամյակ |
| Թեմա և ենթաթեմա | Նյութերի գեղարվեստական մշակում «Փափուկ խաղալիքներ» |
| Օգտագործվող նյութեր՝ | <p>1. Տեխնոլոգիա. 5-րդ դասարանի դասագիրք. /Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան; - Եր.: Տիգրան Մեծ, 2014. – 128էջ.</p> <p>2. Համակարգիչ, պրոյեկտոր, տպիչ</p> <p>3. թուղթ, մատիտ, քանոն, սանտիմետրական ժապավեն,կտոր, մկրատ, թելեր, վատման և այլն: Հարթ և ծավալային փափուկ խաղալիքների նմուշ-օրինակներ, ձևաթղթեր, ձևաններ, հարթ փափուկ խաղալիքներ, պաստառներ, ժապավեններ, ժանյակներ, քուղեր, կոճակներ, գունավոր թղթեր, ինչպես նաև՝</p> <ul style="list-style-type: none"> • տարբեր գույների գործվածքներ (երեխայի ընտրությամբ), • մկրատ, • դերձակի կավիճ կամ գծագրական մատիտ, եթե ընտրենք սպիտակ կտոր, • բարակ ասեղ, • վերը նշված գործվածքի գույների թելեր, • քորոցներ, • լցոնիչ (հոլոֆիբեր, սինթետոն), • սիլիկոնե սոսինձ: |
| Դասի նպատակները | <ul style="list-style-type: none"> • Խթանել հետաքրքրասիրությունը, • հաղորդել գիտելիքներ փափուկ խաղալիքների մասին, • ծանոթացնել ինքնաշեն փափուկ խաղալիքների տեսակներին, |

| | |
|----------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| | <ul style="list-style-type: none"> • սովորեցնել թղթե և գործվածքե ձևանների մշակման՝ եզրագծման, կտրման, կտրահանման տեխնոլոգիան, • ամրապնդել շուկալակարի և օղակակարի տեխնիկան, • զարգացնել գործվածքի մշակման հմտություններ՝ գծանշել ձևանի օգնությամբ, կտրել, կտրահանել, կարել, • ձևավորել գործվածքով աշխատելու կարողություններ, • զարգացնել տարածական պատկերացումները /հարթության մեջ մտովի տեսնել ձևանների դասավորվածությունը/, • ընդլայնել սովորողների պատկերացումները խաղալիքների մասին, • դաստիարակել հոգատար, ուշադիր և կոկիկ վերաբերմունք կատարած աշխատանքի նկատմամբ, • դաստիարակել համագործակցություն աշխատանքային գործընթացում: |
| Վերջնարդյունքները | <p>Սովորողը պետք է՝</p> <p>Իմանա ինքնաշեն փափուկ խաղալիքների տեսակները, էսքիզի մշակման, թղթե, գործվածքե ձևանների ստացման, մշակման՝ եզրագծման, կտրման տեխնոլոգիան, առանձին մասերի միացման համապատասխան կարատեսակները,</p> <p>Կարողանա ստանալ էսքիզը, խաղալիքի ձևանները, կարել առանձին մասնիկները, ձևավորել:</p> |
| Միջառարկայական կապերը՝ | Բնագիտություն Կերպարվեստ |
| Դասի ընթացք/ ընտրված մեթոդներ | Դասի գործնական մասը սկսելուց առաջ, ուսուցիչը երեխաների հետ քննարկում է առաջիկա աշխատանքը, ստուգում երեխաների պատրաստվածությունը և հիշեցնում ձեռքով կարերի կանոնները, ինչպես նաև ձեռքով աշխատանքի անվտանգության |

կանոնները: Դասի ընթացքում ուսուցիչը ուշադիր հետևում է երեխաների կողմից անվտանգության կանոնների կիրառմանը, աշխատանքի տեսպին և ժամանակին տրամադրում է գործնական կամ տեսական օգնություն՝ առանց պարտադրելու և ստիպելու:

Դասը սկսել «Ի՞նչ գիտեք խաղալիքների մասին» հարցադրումով: Լսելով տարբեր պատասխաններ, աշակերտներին հաղորդել համառոտ տեղեկություններ խաղալիքների պատմությունից: Զրուցել խաղալիքների ստեղծման պատմության, տեսակների, նշանակության, անհրաժեշտության մասին՝ որոնք պայմանավորված են եղել կենցաղով, աշխատանքով, ավանդույթներով, ազգային տոներով և պատրաստված են եղել տարածաշրջանին մոտ բնական նյութերով՝ փայտ (անտառ), կավ և այլն: Զրույցը ուղեկցել վերտպումների, պատկերազարդ նկարների ցուցադրումներով: Համակարգչի և պրեյեկտորի առկայության դեպքում ցուցադրել նախապես ընտրված կամ պատրաստված տեսանյութեր, սլայդներ:

Ձևանների ստացման տեխնոլոգիան: Ուսուցիչը բացատրում և ցույց է տալիս ձևանների ստացման տեխնոլոգիան: Փափուկ խաղալիք պատրաստելու համար անհրաժեշտ է աշակերտների հետ ուշադիր զննել նմուշը, բացատրել խաղալիքի տեսակը, ձևը, բնորոշ հատկանիշները, գրատախտակին գծանկարել և մշակել էսքիզը: Խորհուրդ է տրվում աշխատել գունավոր կավիճներով, որը հնարավորություն կտա ընդգծել և տեսանելի դարձնել հիմնական և երկրորդական գծերը: Բացատրելուց հետո, նույն մեթոդով, փափուկ խաղալիքի էսքիզը և ձևանները երեխաները պետք է ստանան թղթից, ապա ձևանները եզրագծեն իրենց ալբոմ-տետրում: Անհրաժեշտ է հիշեցնել, որ եթե թղթի մակերեսը չի բավարարում, սկզբից պետք է գծել մեծ ձևանները, ապա այլ գույներով դրանց վրա գծել մյուս դետալները:

Գործվածքի վրա ձևանները գծագրելու համար ուսուցիչը ցույց է տալիս, որ պետք է ձախ ձեռքը դնել ձևանի վրա, որպեսզի այն գծանշելու ընթացքում չշարժվի, իսկ աջով՝ եզրագծել (ձախիլիկների մոտ հակառակն է): Ձևանները ստանալուց հետո պետք է դնել ծրարի մեջ, վրան կատարելով համապատասխան գրանցումները: Գործվածքների վրա ձևանները պետք է եզրագծել և կտրել առանց կարաբաժնի: Խավոտ և մորթե գործվածքներով աշխատելու ժամանակ պետք է կտրել միայն գործվածքը: Ստացված դետալները պետք է կտրել օղակակարով: Աշխատելու ընթացքում հաճախակի պետք է հիշեցնել աշխատանքային գործիքներից՝ ասեղից, մկրատից անվտանգ օգտվելու կանոնները:

Դասի անդրադարձ վերլուծության ժամանակ աշակերտներին առաջարկվում է պատասխանել հետևյալ հարցերին.

- ա) Ի՞նչ նոր բան սովորեցինք,
- բ) Ի՞նչը կուզենայինք բարելավել,
- գ) Ի՞նչ կուզենայինք հետագայում սովորել:

Ուսուցման արդյունքների գնահատումը

Գնահատումն ուսումնական գործընթացի արդյունավետության և արդյունքների բացահայտման միջոց է: Գնահատման միջոցով պարզվում է յուրաքանչյուր սովորողի կողմից առարկայական չափորոշիչների ու ծրագրային պահանջների կատարման ամբողջական պատկերը: Գնահատումը գիտելիքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա կրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է: Սովորողին ուղղված գնահատականը պետք է վերաբերվի նրա կոնկրետ գործողություններին, գործունեության արդյունքներին, խրախուսի, առձանագրի աճը, ուժեղ և թույլ

կողմերը, հաջողություններն ու վրիպումները: Անհրաժեշտ է սովորողներին ներգրավել գնահատման չափանիշներ (սանդղակներ) մշակելու աշխատանքներում: Այդ դեպքում նախ՝ նրանք կսովորեն գնահատել, երկրորդ՝ կիմանան թե ինչ է պահանջվում իրենցից, երրորդ՝ կմեծանա պատասխանատվությունը: Գնահատման սանդղակը՝ որպես գնահատման չափանիշ, իրենից ներկայացնում է միավորների աղյուսակ, իսկ դրա յուրաքանչյուր միավորը՝ որպես բնութագրող հատկանիշ: Տվյալ առաջադրանքի ուսումնական նպատակից ելնելով, ուսուցիչն աշակերտներին ներկայացնում է գնահատման սանդղակները՝ մշակված ցուցիչներով, որոնք սահմանում են գիտելիքների, կարողությունների հմտությունների մակարդակը: Ստորև ներկայացնում ենք գնահատման սանդղակների նմուշօրինակներ:

Ինչպես գնահատել ստեղծագործական աշխատանքը

| Գնահատվող աշխատանքի տեսակը | Գնահատման հարցեր | միավոր |
|--------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------|
| Գնահատել Ստեղծագործական մոտեցումները | 1. Աշակերտը ստեղծել է մի յուրօրինակ նմուշ, որը նման չէ նույնիսկ գրքի նմուշին: | 6 |
| | Դրսևորել է ստեղծագործական մոտեցումներ: Կատարել է երևակայական նոր տարրերի ներդրումներ: Օգտագործել է գեղարվեստական միջոցներ: | 4 |
| | 2. Նմուշը իր լուծումով նոր է, կա ստեղծագործական մոտեցումներ, սակայն օգտագործել է որոշ գրքային դետալներ: | 3 |
| | 3. Օրինակը և ձևավորումը վերցրել է գրքի օրինակից, կամ որոշակի նոր դետալներ, օգտագործել է գեղարվեստական միջոցներ: | 2 |
| | 4. Կրկնել է գրքի նմուշը մի փոքր փոփոխություններով: | |
| Գնահատել պատրաստի աշխատանքի որակը | Աշխատանքի որակի մակարդակը բարձր է: | 4 |
| | Աշխատանքը ունի ոչ մեծ շեղում: | 3 |
| | Աշխատանքը միջին մակարդակի է: | 2 |
| | Աշխատանքը կատարված է անփույթ: | 1 |

Աշխատանքի ամբողջական գնահատականը ստացվում է երկու բաղադրիչներից ստացած միավորների գումարով:

Նշենք, որ գնահատման այս չափանիշները և սանդղակը աշակերտներին ծանոթացնելիս կամ նրանց հետ քննարկելիս շատ օգտակար կլինի, եթե ուսուցիչը նախապես պատրաստի համապատասխան սահիկներ (շնորհանդեսներ), որոնց միջոցով էկրանին կցուցադրի այնպիսի արտադրանքի նմուշներ, որոնք բավարարում են (կամ չեն բավարարում) այս կամ այն չափանիշին կամ սանդղակի բնութագրիչին:

Եզրակացություն

Կատարելով այս հետազոտական աշխատանքը հանգում ենք հետևյալ եզրակացություններին՝

«Նյութերի գեղարվեստական մշակում» թեման ունի կրթական առանձնահատուկ նշանակություն, քանի որ դրա դասավանդումը տեխնոլոգիական գիտելիքների ձեռքբերման և կարողությունների ու հմտությունների զարգացման խնդիրների արդյունավետ լուծման հետ մեկտեղ նպաստում է սովորողների ինքնահաստատմանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը, ինչպես նաև ազգային ավանդույթների ու մշակույթային արժեքների հետ հաղորդակցմանը, դրանց պահպանմանը և ստեղծագործաբար զարգացմանը:

Թեմայի ուսուցման արդյունավետությունը նկատելիորեն կբարձրանա , եթե դասավանդման գործընթացում նպատակային օգտագործվեն SCS ընձեռած հնարավորությունները, մասնավորապես՝ դասի ընթացքում ավանդաբար օգրագործվող պլակատները, պատճենված նկարները, սխեմաները փոխարինվեն մշակված էլեկտրոնային նյութերի (թեմատիկ սահիկահանդես, տեսաձայնային և անիմացիոն նյութեր, արտադրանքի պատրաստման տեխնոլոգիայի տեսանյութ և այլն) ցուցադրմամբ. դրա շնորհիվ դասը կդառնա ժամանակակից, ինչը այսօրվա երեխաների համար ավելի ընկալելի է և ակնկալվող:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ. ՀՀ կառավարության 28.07.2011թ. N 1088-Ն որոշորոշում, Երևան:
2. Տեխնոլոգիա .առարկայական չափորոշիչ և ծրագիր , ՀՀ ԿԳՆ, 2012թ., Երևան
3. Ս.Հովսեփյան, Ա. Հարությունյան և ուրիշ. Տեխնոլոգիա. 5-րդ դասարանի դասագիրք,-Եր.:Տիգրան ՄԵԾ, 2019
4. Мягкая игрушка.- М.: «Рипол Классик»; Спб.: «Валери СПб», 2000.- (Серия «Энциклопедия рукоделия».)
5. Золина Т.М. Иванова Т.И. Мягкая игрушка. Забавный зоопарк — М.: Эксмо; Спб.: Терция, 2007.- (Академия «Умелые руки»).
6. Бесан С.Б. Мастер-класс по созданию мягкой игрушки // Преподавание технологии. – М.: Изд. Дом «Первое сентября», 2004.
7. **Урок технологии "Изготовление игрушки". 5-й класс**
8. <https://urok.1sept.ru/статьи/627493/>